**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի ապրիլի 17-ի թիվ 2.2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01**

**«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար լաբորատոր սարքավորումների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի ապրիլի 15-ին և 16-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2026 թվականի ապրիլի 17-ին տրամադրված պարզաբանումները՝

**Հարցադրում N1՝ ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01** ծածկագրով մրցույթի 17-րդ չափաբաժնի համար Ձեր կողմից պահանջվում է ներկայացնել փաստաթղթեր, որոնք կհաստատեն համապատասխանությունը ГОСТ Р 58406.2-2020 ստանդարտին: Հաշվի առնելով, որ ГОСТ Р 58406.2-2020-ը կիրառման ստանդարտ է, իսկ մաղերի տեխնիկական պայմանները սահմանվում են ГОСТ 3826-82 ստանդարտով, խնդրում ենք պարզաբանել՝ արդյո՞ք Ձեզ համար ընդունելի կլինի, եթե՞ առաջարկվող արտադրանքը համապատասխանի ГОСТ 3826-82 ստանդարտի պահանջներին և միաժամանակ կիրառելի լինի ГОСТ Р 58406.2-2020 ստանդարտի շրջանակներում:

**Պարզաբանում N1՝ ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01** ծածկագրով մրցույթի հրավերում 17-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում, որպես մաղերի պահանջները սահմանող նորմատիվ փաստաթղթեր նշված են ГОСТ Р 58406.2-2020 և ГОСТ ISO 3310-1 ստանդարտները: ГОСТ 3826-82 ստանդարտը կորցրել է իր արդիականությունը և չի կիրառվում ГОСТ Р 58406.2-2020-ով նախատեսված փորձարկումների համար:

Համաձայն ГОСТ Р 58406.2-2020 ստանդարտի պահանջների՝ փորձարկումների իրականացման համար պետք է կիրառվեն մաղեր, որոնք համապատասխանում են ГОСТ Р 51568 և ISO 3310-1 ստանդարտներին: Այս ստանդարտները հանդիսանում են գործող և կիրառելի տվյալ ոլորտում:

Այսպիսով, ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01 ծածկագրով մրցույթի հրավերի 17-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը կազմված է ճիշտ, իսկ ГОСТ 3826-82-ի վերաբերյալ դիտարկումը հիմնավորված չէ:

**Հարցադրում N2՝** Ուսումնասիրելով սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված 18-րդ չափաբաժնի Տեխնիկական առաջադրանքը՝ հայտնում ենք մեր առարկությունը դրանում տեղ գտած չափագիտական անհամապատասխանության վերաբերյալ, որը խաթարում է գնման գործընթացի օբյեկտիվությունը:

Առարկության հիմնավորումը.

Հակասություն ԳՕՍՏ 33078-2014 (ГОСТ 33078-2014) ստանդարտին. Տեխնիկական առաջադրանքի 9-րդ կետով պահանջվում է սարքավորումների համապատասխանություն ԳՕՍՏ 33078-2014 ստանդարտին: Սակայն 8-րդ կետում «Կառչման գործակցի չափիչ շարժական սարքի» համար սահմանված ±0,005 թույլատրելի բացարձակ սխալանքի պահանջը չի համապատասխանում նշված ստանդարտի դրույթներին: ԳՕՍՏ 33078-2014-ով սահմանված մեթոդաբանությունը նմանատիպ շարժական սարքերի համար նախատեսում է ±0,05 բացարձակ սխալանքի սահման:

Չափագիտական անհնարինություն. Տվյալ դասի պորտատիվ (շարժական) չափիչ սարքավորումների համար ±0,005 ցուցանիշը տեխնիկապես անիրագործելի է և չի հանդիսանում ստանդարտացված չափանիշ: Այս ցուցանիշը տասնապատիկ գերազանցում է աշխարհում գոյություն ունեցող լավագույն նմանատիպ սարքերի ֆիզիկական և մետրոլոգիական հնարավորությունները: Նման պահանջի առկայությունը Տեխնիկական առաջադրանքում ակնհայտ տեխնիկական վրիպակ է (օրինակ՝ ստորակետից հետո ավելորդ զրոյի առկայություն):

Մրցակցության սահմանափակում. Քանի որ շուկայում գոյություն չունի որևէ շարժական սարքավորում, որն ապահովում է ±0,005 ճշգրտություն, նշված պահանջի պահպանումը հանգեցնում է նրան, որ որևէ մասնակից չի կարողանա առաջարկել համապատասխանող ապրանք: Սա հակասում է գնումների մասին օրենսդրությանը՝ սահմանափակելով արդար մրցակցությունը և սահմանելով անիրագործելի պայմաններ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք.

Վերանայել Տեխնիկական առաջադրանքի 8-րդ կետը և ±0,005 թույլատրելի բացարձակ սխալանքի ցուցանիշը փոխարինել տեխնիկապես հնարավոր և ԳՕՍՏ 33078-2014-ին համապատասխանող ±0,05 ցուցանիշով:

Խնդրում ենք սահմանված կարգով փոփոխություններ կատարել Տեխնիկական առաջադրանքի մեջ՝ ապահովելով գնման գործընթացի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և տեխնիկական ստանդարտներին:

**Պարզաբանում N2՝ ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01** ծածկագրով մրցույթի 18-րդ չափաբաժնի տեխնիկական առաջադրանքի 8-րդ կետում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, մասնավորապես՝ նախատեսված թույլատրելի բացարձակ սխալանքի սահմանները ±0.005–ի փոխարեն պետք է լինեն ±0.05:

**Հարցադրում N3՝** Հարգելի պատվիրատու, 6-րդ չափաբաժնի համար տեխնիկական պահանջներով նախատեսված USB ինտերֆեյսի և USB կրիչի փոխարեն ընդունելի է տվյալների փոխանցման Wi-Fi տարբերակը, որը ապահովվում է չափումների տվյալների փոխանցում սմարթֆոն, պլանշետ կամ համակարգիչ:

**Պարզաբանում N 3՝ ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01** ծածկագրով մրցույթի 6-րդ չափաբաժնի տեխնիկական պահանջներում նախատեսված է USB ինտերֆեյս և USB կրիչի օգտագործում: Այս պայմանը մնում է անփոփոխ՝ հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջների համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Մարգարիտա Եղիյանին**:

***Հեռախոս՝ 010 54 21 76***
***Էլ. Փոստ՝*** *procurement@armroad.am*
***Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ***

**ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով